ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

18 մարտի 2019 թվականի N 55-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 45-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ԳԵՈՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության 2019 թվականի փետրվարի 14-ի թիվ 02-01 գրությունը, Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը.

Հրամայում եմ

1. «ԳԵՈՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման թիվ 18 հրաժարման հավաստագիրը:

2. Ուժը կորցրած ճանաչել «ԳԵՈՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությանը ՀՀ Վայոց Ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակումում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2012 թվականի օգոստոսի 30-ին տրամադրված ԵՀԹ-29/098 թույլտվությունը, լուծել թիվ Պ-098 ընդերքօգտագործման պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին,
- ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝

ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Տիգրան Արզումանյանին:

3/18/2019

X

VERIFIED OCSP 3/18/2019 16:05:35 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

/ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ